Գոռ Մաթևոսյան

Նեղսրտում եմ

Նեղսրտում եմ հաճախ չգիտեմ էլ՝ ինչից,

Վարդագույնից գուցե,

Որ ինձ մոտ չէ բնավ,

Հավանաբար սևից,

Որ իմ մեջ է վաղուց...

Նեղսրտում եմ նաև, որ աշունը երկար

Իր թռիչքից հետո ժամանել է արդեն,

Պարտքատիրոջ նման սառ խստությամբ հատու

Սկսել է ջարդել մեր դռները փայտե,

Ու ուր որ է պիտի ինչպես փոքրիկ կատու

Պատուհանից խուժի ու գոռգոռա՝ վե՛ր կաց...

Նույնիսկ նեղսրտում եմ ոչ մի բանից հարկավ,

Ոչինչ չի պատահել ինձ հետ արտասովոր,

Ո՛չ փորձություն, ո՛չ էլ վտանգավոր արկած,

Բայց թվում է հիմա՝ փակ աչքերով պառկած՝

Տեսնելու եմ մի բան՝ սաստիկ ու ահավոր...

Նեղսրտում եմ հիմա, գուցե ինչպես երբեք,

Ու տրտում եմ հիմա, ինչպես աշնան թաց երգ...

09.09.2023